


# ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՆԼՐՋՈՒԹԻՒՆ

Posted on February 28, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



## Մենք ենք՝ Մեր Ցաւերը Շարքեն

Պարոյր Աղապաշեան, Պէյրուզ, 28 Փետրուար 2013



Երբ կը խօսուի հայ մամուլի մասին, առաջին հարցադրումները, որոնք կը ծագին շատերու մտքին մէջ, հետեւեալներն են.

- Կա՞ն ընթերցելի թերթեր
- Ունի՞նք ընթերցող հասարակութիւն

## Մենք ենք՝ Մեր Ցաւերը Շարքեն

Պարոյր Աղապաշեան, Պէյրուզ, 28 Փետրուար 2013



Երբ կը խօսուի հայ մամուլի մասին, առաջին հարցադրումները, որոնք կը ծագին շատերու մտքին մէջ, հետեւեալներն են.

- Կա՞ն ընթերցելի թերթեր
- Ունի՞նք ընթերցող հասարակութիւն

Պատասխանները կրնան ըլլալ խայտաբղետ, տեսակաւոր, նայած թէ ամէն ոք ինչպէ՞ս կ'ընկալէ հայ թերթը, ինչպէ՞ս կը վերաբերուի անոր հետ, ինչպէ՞ս կը գնահատէ, իսկ ամենէն կարեւորը՝ ո՞րքանով հետաքրքրուած է հայ թերթով:

Բացարձակ, Նոյնիսկ անվիճելի իրողութիւն է, որ երկուսն հայ թերթը այսօրուանը չէ, անցեալինը՝ Ներկան չէ, կայ *հսկայական* տարբերութիւն, աւելի ճիշդ՝ վիհ, որակի ու մակարդակի առումներով, հետաքրքրութեան ու շահագրգռութեան իմաստներով:

Հայ թերթը, որ եղած է հայ մտաւորականութեան դասագիրքը, հայ մանկավարժութեան դպրոցը, հայ հասարակութեան շտեմարանը, հայ քաղաքականութեան ուղեցոյցը, միով բանիւ՝ հայ ժողովուրդին «հանրագիտարան»ը, դժբախտաբար, այսօր, չունի Նոյն հմայքը, զուրկ է գրաւորութենէ, կը տառապի մէկէ աւելի... կաղացումներով:

Մեր կարծիքով, այս անկումին կամ յետադիմութեան հիմնական պատճառներէն են՝

- Մամուլ հասկացողութեան մասին ապայրջութիւնը
- Մամուլի դերակատարութեան մասին դիրքմբռնումը
- Մամուլի առաքելութեան մասին թերահաւատութիւնը
- Մամուլի առաջադրութեան մասին անտեղեակութիւնը
- Մամուլի ազդեցութեան մասին անհամաձայնութիւնը

Ցաւալին այն է, որ հայ մամուլը՝ իր արժանիքներով, առաքիւնութիւններով ու բարեմասնութիւններով, *լուրջ* ու *խոր*



կարեւորելու անոր անփոխարինելիութիւնը, ուրկէ կրնան առաջանալ խոստմնալի թեկնածուներ կամ վստահելի պատրաստակամներ, որոնք կ'ուզեն ընթանալ այդ ուղիով եւ ընդգրկել գայն:

Բայց, իրաւացիօրէն, ոմանք պիտի հարցադրեն թե՛ նման մասնագիտութիւն ընտրողներ, ո՞ր պիտի պաշտօնավարեն, ո՞ր պիտի ծառայեն, ի՞նչ պիտի ըլլայ անոնց վարձատրութիւնը, ի՞նչ երաշխիքներ պիտի ունենան:

Իրաւունք ունին, որովհետեւ ո՛չ խնամատար կայ, ո՛չ հովանաւոր, ո՛չ գնահատող, ո՛չ ալ քաջալերող, հետեւաբար, նոյն անպատասխանատուներու եւ անլրջութիւններու պատճառով, հայ մամուլը կրնայ հիւծիլ, սկսած է հիւծիլ, իսկ այս վարընթացը ոչինչով կը նպաստէ սփիւռքահայութեան, ա՛յն սփիւռքահայութեան, իմա՝ Տարագիր հայութեան, որ շուրջ հարիւր տարիէ ի վեր ինքզինք կը պահէ ու կը պահպանէ, որպէսզի նորօրեայ դեղնակտուցներ եւ անոնց դրածոներ գայն խամրե՞ն:

Ժողովրդային առածը կ'ըսէ. «Ծուռ նստինք, շիտակ խօսինք», բայց հիմա եղածը՝ թե՛ ծուռ նստիլն է, թե՛ շիտակ... չխօսիլն է, ինչո՞ւ, որովհետեւ ուղեղով, գործով, հանգամանքով ու նկարագիրով «ծուռ»երը շատցած են:

Այս մետալին միւս երեսն ալ գիտե՞ք ո՞ր է... Հայաստան, այնքան ատեն որ կը փորձէ իր «արշին»ներով մամուլ «գնահատել», չանդրադառնալով, թէ «հոգեվարք»ներու մէջ գտնուողներու մահերգը կը շեփորէ, փոխանակ աւելի ազդու դարմանիչ միջոցներ գտնելու, առանց ինքզինք նետելու հաճոյակատարութիւններու յորձանուտին մէջ, ի հաշիւ ոմանց գոհացում տալու իր «սփիւռքասիրական» ճիգին, բայց, ինչ-որ տեղ, վարկազրկելով, վարկաբեկելով հայ մամուլը...:

Այս թոհուբոհին մէջ, ինչպէ՞ս կարելի է հայ մամուլ պահել, երբ մէկ կողմէն՝ Սփիւռքը կը թերանայ իր յանձնառութեանց մէջ, միւս կողմէն ալ՝ Հայաստանը կ'անլրջէ այս թղթածրարը:

